



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ

ԷԹԻԿԱՅԻ ՀԱՐՑԵՐՈՎ ԺԱՄԱՆԱԿԱԿՈՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱԿՈՐՆԵՐ ՍՊԱՐՏԱԿ ՄԵԼԻՔՅԱՆԻ, ԱՐՇԱԿ ՄԽԻԹԱՐՅԱՆԻ, ՀԱՄԼԵՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ, ԲԱԶՄԱՍԵՐ ԱՌԱՔԵԼՅԱՆԻ, ԿԱՐԵՆ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԻ, ՍԵՅՐԱՆ ՍԱՐՈՅԱՆԻ ԵՎ ԱՌԱՔԵԼ ՄՈՎՍԻՍՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՊԱՏԳԱՄԱԿՈՐԻ ԷԹԻԿԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ ԽԱՆՏԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

18.02.2016թ.

N Է-3/16

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի էթիկայի հարցերով ժամանակավոր հանձնաժողովը՝ (այսուհետ՝ Հանձնաժողով) կազմով. Խոսրով Հարությունյանի (նախագահող), Վահան Բաբայանի, Թևան Պողոսյանի, Հովհաննես Մարգարյանի,

համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի փետրվարի 20-ի ՀՕ-308 օրենքի (այսուհետ՝ Կանոնակարգ) 24.2-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի, 24.4-րդ հոդվածի և Հանձնաժողովի կանոնակարգի 12-րդ գլխի,

դռնփակ նիստում քննեց Լիլիթ Լալայանի (այսուհետ՝ Դիմող) 29.12.2015թ. N 2-2811 դիմումի (այսուհետ՝ Դիմում) գործով զեկուցող՝ պատգամավոր Թևան Պողոսյանի ներկայացրած սույն որոշման նախագիծը:

Ուսումնասիրելով Դիմումը և գործում առկա նյութերը,
Հանձնաժողովը **ՊԱՐՁԵՑ**.

1. Դիմումը վերաբերվում է թիվ 72 ընտրատարածքի պատգամավոր Սպարտակ Մելիքյանի, թիվ 97 ընտրատարածքի պատգամավոր Արշակ Մխիթարյանի, թիվ 69 ընտրատարածքի պատգամավոր Համլետ Հարությունյանի,

թիվ 105 ընտրատարածքի պատգամավոր Բազմասեր Առաքելյանի, թիվ 31 ընտրատարածքի պատգամավոր Կարեն Սարիբեկյանի, թիվ 19 ընտրատարածքի պատգամավոր Սեյրան Սարոյանի, թիվ 68 ընտրատարածքի պատգամավոր Առաքել Մովսիսյանի կողմից այլ պատգամավորների փոխարեն քվեարկելուն:

Ըստ Դիմողի՝ նշված պատգամավորները խախտել են Կանոնակարգի 6.1-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» և «գ» կետերով նախատեսված էթիկայի կանոնները:

Դիմողը իր պնդումները հիմնավորում է www.past.am էլեկտրոնային լրատվամիջոցի հրապարակումների համապատասխան հղումներով (<http://past.am/?p=27325&l=am>, <http://past.am/?p=27663&l=am>, <http://past.am/?p=28204&l=am>, <http://past.am/?p=28339&l=am>, <http://past.am/?p=28862&l=am>, <http://past.am/?p=29037&l=am>, <http://past.am/?p=29416&l=am>) և խնդրում է Հանձնաժողովին որոշում կայացնել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Սպարտակ Մելիքյանի, Արշակ Մխիթարյանի, Համլետ Հարությունյանի, Բազմասեր Առաքելյանի, Կարեն Սարիբեկյանի, Սեյրան Սարոյանի, Առաքել Մովսիսյանի կողմից Կանոնակարգի 6.1-րդ հոդվածով նախատեսված էթիկայի կանոնները խախտելու վերաբերյալ:

2. 2016 թվականի հունվարի 20-ին Հանձնաժողովը կայացրել է «Լիլիթ Լալայանի 29.12.2015թ. N 2-2811 դիմումի քննությունը սկսելու վերաբերյալ» թիվ Է-1/16 որոշումը, որով հարցի քննարկման և դրա վերաբերյալ Հանձնաժողովին եզրակացություն ներկայացնելու նպատակով Հանձնաժողովի ներկայացուցիչ է նշանակվել պատգամավոր Թևան Պողոսյանը:

3. 2016 թվականի փետրվարի 15-ին տեղի է ունեցել Հանձնաժողովի նիստ, որում Կանոնակարգի 24.4-րդ հոդվածի 1-ին մասի «ը» կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Սպարտակ Մելիքյանը, Արշակ Մխիթարյանը, Համլետ Հարությունյանը, Բազմասեր Առաքելյանը, Կարեն Սարիբեկյանը, Սեյրան Սարոյանը, Առաքել Մովսիսյանը հնարավորություն

ունեին ներկայացնելու սույն գործով Հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ իրենց պարզաբանումները և դիրքորոշումը: Սակայն Հանձնաժողովի կողմից սահմանված ժամկետում մինչև փետրվարի 15-ը, պատգամավորների կողմից որևէ պարզաբանում չէր ներկայացվել:

4. Ուսումնասիրելով գործին առնչվող բոլոր նյութերը, այդ թվում՝ տեսաձայնագրությունները, Հանձնաժողովը գտնում է, որ Դիմումում նշված պատգամավորները, քվեարկելով այլ պատգամավորների փոխարեն, խախտել են Կանոնակարգի 61-րդ հոդվածի 5-րդ մասը, որի համաձայն՝ *«Պատգամավորը քվեարկում է անձամբ՝ կողմ, դեմ, ձեռնպահ, կամ կարող է սույն օրենքի 99-րդ հոդվածի 3-րդ կետի «դ» կամ «ե» ենթակետերով նախատեսված կարգով հրաժարվել քվեարկությանը մասնակցելուց»:*

Վերոգրյալի հիման վրա՝ Հանձնաժողովը գտնում է, որ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Սպարտակ Մելիքյանը, Արշակ Մխիթարյանը, Համլետ Հարությունյանը, Բազմասեր Առաքելյանը, Կարեն Սարիբեկյանը, Սեյրան Սարոյանը, Առաքել Մովսիսյանը խախտել են Կանոնակարգի 6.1-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» կետով նախատեսված էթիկայի կանոնը, այն է՝ հարգել օրենքը և ենթարկվել օրենքին և «գ» կետով նախատեսված էթիկայի կանոնը, այն է՝ պահպանել Ազգային ժողովի և նրա հանձնաժողովների նիստերի անցկացման կարգը:

5. Միաժամանակ, պատգամավորների կողմից օրենքի նման խախտումները հետագայում բացառելու նպատակով՝ Հանձնաժողովը նպատակահարմար է գտնում դիմել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նախագահին առաջարկով՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի առաջիկա քառօրյա նիստերի ընթացքում քննարկման ենթակա հարցերի շարքում ընդգրկել առաջին ընթերցմամբ ընդունված «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (Պ-176-11.12.2012,08.11.2013-ՊԻ-010/1) նախագիծը, որի 1-ին հոդվածի 1-ին մասով առաջարկվում է Կանոնակարգի 45-րդ հոդվածի 2-րդ մասում, որտեղ տրվում է կարգազանց պատգամավորների սահմանումը, կատարել համապատասխան լրացում, որի համաձայն կարգազանց կհամարվեն նաև այն պատգամավորները, որոնք գրանցվում կամ քվեարկում են բացակա պատգամավորի փոխարեն: Կանոնակարգում համապատասխան լրացում կատարելուց հետո նիստը վարողը հնարավորություն կունենա բացակա

պատգամավորի փոխարեն գրանցվող կամ քվեարկող պատգամավորների նկատմամբ կիրառել կարգապահական միջոցներ:

Հանձնաժողովն առաջարկում է նաև «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (Պ-176-11.12.2012,08.11.2013-ՊԻ-010/1) նախագիծը երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ ընդունվելու դեպքում նիստը վարողն ուրիշի փոխարեն քվեարկող կարգազանց պատգամավորների նկատմամբ միանգամից կիրառի ամենախիստ կարգապահական միջոցը՝ Կանոնակարգի 45-րդ հոդվածի 3-րդ մասի «ե» կետը:

Ելնելով գործի քննության արդյունքներից, ղեկավարվելով Կանոնակարգի 24.2-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով, Հանձնաժողովը **ՈՐՈՇԵՑ**.

1. Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Սպարտակ Մելիքյանը, Արշակ Մխիթարյանը, Համլետ Հարությունյանը, Բազմասեր Առաքելյանը, Կարեն Սարիբեկյանը, Սեյրան Սարոյանը, Առաքել Մովսիսյանը թույլ են տվել Կանոնակարգի 6.1-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» և «գ» կետերով նախատեսված էթիկայի կանոնների խախտում:

2. Դիմել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նախագահին առաջարկով՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի առաջիկա քառօրյա նիստերի ընթացքում քննարկման ենթակա հարցերի շարքում ընդգրկել առաջին ընթերցմամբ ընդունված «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (Պ-176-11.12.2012,08.11.2013-ՊԻ-010/1) նախագիծը:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

ԽՈՍՐՈՎ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ